

ԼԵԶԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԵԽԻԶԻՍԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIV-XVII ԴԴ. ՀԱՅԵՐԵՆ ԶԵՆԱԳՐԵՐՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատեխիզիսի վերաբերյալ տարբեր աղբյուրներում տրվում են տարբեր սահմանումներ: Վ. Ի. Դալը տալիս է բառի առավել ամբողջական բացատրությունը. «Քրիստոնեական հավատի մասին սկզբնական, հիմնական ուսմունք, այդ ուսմունքը պարունակող գրքույկ, որևէ գիտության սկզբնական և հիմնական ուսմունք»²⁷, իսկ «Հանրագիտական բառարանում» այն հետևյալ սահմանումն ունի՝ «1. քրիստոնեական հավատի էական կետերի համառոտ մեկնություն հարց ու պատասխանի ձևով: 2. առհասարակ ամեն մի վարդապետության մեկնությունը՝ հարց ու պատասխանի ձևով»²⁸: Էդ. Աղայանի մեկնաբանմամբ կատեխիզիսը քրիստոնեական դավանանքի համառոտ շարադրանք է հարց ու պատասխանի ձևով, ինչպես նաև գիտության որևէ ուղղության՝ ուսմունքի հիմնական սկզբունքների շարադրանք²⁹:

Քանի որ հայերը փիլիսոփայության հետ մեկտեղ հույներից սովորել էին նաև քերականությունը³⁰, ուստի հունարան դպրոցի ներկայացուցիչներն էլ հունարենի նմանողությամբ ստեղծել էին որոշ նորամուծություններ՝ ավելի հեշտացնելով գիտական տերմինաբանության մշակումը³¹: Կատեխիզիս բառը ևս այդ շրջանի հունարենի նորամուծություններից է, այն ունի երկու տարբերակ. կատեխիզիս և կատիխիզիս, որոնց առաջացման և պարզաբանման համար դիմենք բառի ստուգաբանական վերլուծությանը:

Բառն առաջացել է հունարեն *ή κατήχησις* գոյականից՝ «հրապարակում, (բանավոր) ուսուցում, խրատ», որը ձևավորվել է *κατηχέω* բայից՝ «հրապարակել, (բանավոր) ուսուցել, սովորեցնել»: Այդ բայը նախածանցավոր ձևն է *ήχέω* բայի՝ «ձայն արտաբերել, հնչել» (հմմտ.՝ *ό ήχος* «ձայն, խոսք», *ή ήχη* «ձայն, աղմուկ», *ή ήχώ* «արձագանք, ընդօրինակություն, ձայն, աղմուկ, ճիչ, խոսակցություն») և պարունակում է *κατα* նախածանցը՝ գործողության ավարտման ամբողջականության նշանակությամբ: Հրա-

²⁷ В. Даль. Толковый словарь живого великорусского языка. Т. II. СПб.-М., 1911, с. 243.

²⁸ «Հանրագիտական բառարան», հ. I, Թիֆլիս, 1915, էջ 1142:

²⁹ Տե՛ս Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (Ա-Չ), Եր., 1976, էջ 700:

³⁰ Տե՛ս Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. I, Եր., 1958, էջ 78:

³¹ Տե՛ս Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Եր., 1971, էջ 324:

պարակել, բարձրաձայնել (κατηχέω) և հրապարակված (κατηχούμενος) բառերի կապակցությամբ հետաքրքրություն են ներկայացնում սլավոնական եկեղեցու հարանունների բառարանի նյութերը՝ κατηχέω «1. ուսուցել, սովորեցնել, լուսավորել... 2. լարել (երաժշտական գործիքի մասին)», κατηχούμενος «մկրտմանը պատրաստվող, նա, ում հաղորդվել են հավատի հիմքերը»³²:

Ըստ ռուսերենի ստուգաբանական բառարանների՝ բառը փոխառություն է լատիներենից. «լատ. catechēsis, հուն.՝ ուսուցում, խրատ», «ուշ լատ. catechēsis – կատեխիզիս, աստվածաբանության տարրական դասընթաց < հուն. katēchēsis – ուսուցում, խրատ, հրապարակում, katēcheō բառից՝ բանավոր ուսուցել, ēcheō-ից՝ հնչել, ēchō-ից՝ արձագանք, լուր, խոսք»³³:

Գոյություն ունի հին հունարեն բառերի հնչյան երկու համակարգ, որոնք անվանվել են Վերածննդի ժամանակաշրջանի այդ տարբերակներն առաջարկած գիտնականների անուններով՝ Էրազմ Ռոտերդամցու և Յոհան Ռեյխլինի: Էրազմական համակարգն այդ բառի առոգանությունը կապում է գրության հետ և արտացոլում է հունարեն բառերի հնչողությունը լատիներենում: Այն ընդունված է եվրոպական շատ երկրներում, Ռուսաստանում: Ռեյխլինյան համակարգը գալիս է բյուզանդական կենդանի խոսքից: Այն էրազմականից շուտ էր ընդունվել և ամրապնդվել էր հոգևոր հաստատություններում: Ռեյխլինյան համակարգով ընդունված է կարդալ աստվածաբանական տեքստերը:

Հունարեն κατήχησις գոյականում հետաքրքրական է η և σ տառերի տարբեր արտասանությունը այդ համակարգերում: Էրազմականում η-ն արտասանվում է ինչպես «է», իսկ σ-ն, ըստ լատիներենի կանոնների, ձայնեղանում է: Ռեյխլինյան տարբերակում η-ն արտաբերվում է որպես «ի», իսկ σ-ն պահպանում է խլությունը («ս»): Այդպիսով, էրազմականում մեր բառը պետք է հնչի «կատեխեզիս», իսկ ռեյխլինյանում՝ «կատիխիս»:

Կատեխիզիս ժանրային ձևն օգտագործվել է գիտության տարբեր բնագավառների աշխատություններում: Մեզ առավել հայտնիներն են Բարսեղ Կեսարացու «Գիրք հարցողաց», Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց», աշխատությունները, որոնք շարադրված են հարց ու պատասխանի ձևով³⁴: Հայտնի է նաև Դավիթ Ձեյթունցու քերականական երկը, որը ևս նույն ձևով է շարադրված³⁵:

Հայերեն ձեռագրերում կատեխիզիսների միջոցով ներկայացվում էին հիմնականում ուսումնական ձեռնարկները, որոնցում հարց ու պատասխանը տեղի էր ունենում ուսուցչի և աշակերտի միջև, ընդ որում՝ ոճը խիստ աշխույժ էր, օրինակներն՝ առատ, որն էլ ուսուցումը դարձնում էր հնարավորինս մատչելի: Քանի որ ուսուցումը կատեխիզիսների միջոցով դառնում էր ավելի առարկայական ու տեսանելի, ուստի բացառություն չեն

³² Համացանցային՝ <http://urokirus.com/online/blogs/7433-2011-06-13-13-52-38.html>

³³ Дворецкий Н. Латинско-русский словарь. М., 1976, с. 163, «Латинский словарь», М. 1883, с. 172.

³⁴ Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. V, եր., 1979, էջ 289:

³⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, եր., 1954, էջ 329:

կազմել և քերականական աշխատությունները, որոնք մի քանի ձեռագրերում ներկայացվում են կատեխիզիսների տեսքով:

Սույն հոդվածի ուսումնասիրության առարկան են ՄՄ 2366 (ԺԴ-ԺԵ դդ.), ՄՄ 2307 (ԺԵ դ.) և ՄՄ 2448 (1687-1689 թթ.) ձեռագրերը³⁶, որոնցում քերականությունը ներկայացված է հարց ու պատասխանի տեսքով: Բնագրին անդրադարձ չկատարելով հիշատակում ենք նաև ՄՄ 7995 (1632-1633 թթ.) ձեռագրի 89բ-90բ էջերում ներկայացված քերականական նյութը, որը բացառապես նույնն է, ինչ թիվ 2366 ձեռագրի 13բ-14բ էջերինը: Հատկապես ընտրել ենք վերոհիշյալ երեք ձեռագրերը՝ համապատասխան նյութերի ուսումնասիրված և գիտական շրջանառության մեջ դրված չլինելու պատճառով:

ՄՄ 2366 ձեռագրի 13բ-14բ էջերում (այսուհետ մեջբերվող նյութին կից կնշենք տվյալ ձեռագրի միայն էջը) տրվում է քերականության ընդհանուր բնութագիրը: Նյութը սկսվում է «Զի՞նչ է քերականութիւն» հարցով, որն էլ շարունակվում է պատասխանների և դրանցից ծագող հարցերի միջոցով. «Պատասխանի. քերթածաց և շարագրածաց, ասացուածոց հմտանալ: Հարցումն. Քանի՞ են մասունք քերականութեան: Պատասխանի. Վեցոյք են՝ վերծանութիւն, գրուցատրութիւն, գիտել զլեզուս և զինագէտ պատմութիւնս, ստուգաբանութիւն, համեմատութիւն, դատումն քերդածաց...» (էջ 13բ): Այստեղ թվարկվում են քերականության վեց բաժինները, սակայն խոսվում է միայն վերծանության, նրա եղանակների և շաղկապորեն դրանցից ծագող քերականական կարգերի մասին: Քերականը այնուհետև խոսում է տառի մասին, բայց նա միջնադարյան մյուս քերականների պես չի նույնացնում տառն ու գիրը. առանձնացնում է ձայնավորները, բաղաձայնները և երկբարբառները: Այս առիթով հիշենք Դավիթ փիլիսոփայի մի հետաքրքիր նկատառում. նա տառը նմանեցնում է մարդկային մտքին, ձայնավորները՝ զգայարաններին, իսկ բաղաձայնները՝ մարմնի այլ անդամներին³⁷: Այնուհետև քերականը խոսում է «փաղառության» մասին: Սովորաբար աղբյուրներում «վանկ» և «փաղառութիւն» եզրերը միասին են հանդիպում, սակայն այս ձեռագրում խոսվում է միայն «փաղառության» մասին՝ չհիշատակելով վանկը: Եվ վերջապես, քերականը նյութն ավարտում է թվարկելով խոսքի մասերը՝ «անուն, բայ, ընդունելութիւն, յաւղ, դերանուն, մակբայ, նախդիր, շաղկապ»:

Հաջորդը թիվ 2307 ձեռագիրն է, որտեղ (83բ-86ա) հարց ու պատասխանի տեսքով ներկայացվում են «Գրիգոր» բառի քերականական վերլուծությունը, ինչպես նաև «Եղանակ վարդապետութեան» և «Բառք քերականութեան» նյութերը: «Գրիգոր» բառը ներկայացվում է ամենայն մանրակրկտությամբ՝ քերականական վերլուծության ենթարկելով յուրաքանչյուր տառն անգամ. «Հարց. Գրիգոր ըստ քերականութեան զի՞նչ է: Պատասխանի. Գրիգոր ըստ քերականութեան ի կիրառնլիս և կիրառութիւնս: Կիրառնելիք են չորք՝ գիր, վանք, բառ և մասն բանի. ըստ գրոցն ձայնաւոր և ի բաղաձայն...» (էջ 83բ): Աշխատության հեղինակը «Գրիգոր»

³⁶ Ձեռագրերից մեջբերվող նյութերը ներկայացնում ենք բացառապես պահպանելով բնագրերի ուղղագրությունը:

³⁷ Տե՛ս Ն. Աղոնց, Երկեր, հ. Գ, Եր., 2008, էջ 95:

բառը քննում է որպես «կիրառելիք» և «կիրառություն»: Այս առիթով նշենք, որ հայ քերականներից Սիմեոն Ջուղայեցին էր, որն իր ուսումնասիրության առարկա քերականական նյութը բաժանում էր երկու մասի՝ կիրառելիքի և կիրառվողի քննության³⁸: Եվ կարելի է կարծել, որ մեր ուսումնասիրության առարկա նյութի հեղինակը քաջատեղյակ է եղել Ջուղայեցու քերականությանը, քանի որ իր քննությունը կատարել է նրա քերականության հետևողությամբ: «Գրիգոր» բառի քերականական քննությունը սկսվում է գրից: Քերականը Դիոնիսիոս Թրակացու, Յովհաննես Քռնեցու, Գևորգ Սկևռացու և մյուս քերականների պես նույնացնում է «տառ» և «գիր» հասկացությունները: Գիրը՝ որպես պարզ (արմատական) եզր, զուտ հայկական է, այսինքն՝ գալիս է դասական հայերենից և բաժանվում է ձայնավորների ու բաղաձայնների: Նշենք, որ քերականը աշխատության մեջ խոսում է միայն «Գրիգոր» բառին վերաբերող քերականական հատկանիշների մասին, այդ իսկ պատճառով հանդիպում ենք սահմանափակ թվով քերականական եզրերի: Խոսվում է բառի մեջ առկա երկու ձայնավորների մասին՝ «ի» և «ո»՝ ըստ իրենց քերականական հատկանիշների՝ «ի - երկար, երկամանակ, առաջադիր և ստորադաս, ո - սուղ և առաջադիր» (էջ 83բ), նույն կերպ ներկայացվում են նաև բաղաձայնները. «գ - միջակ և անձայն, ր - լերկ, կիսաձայն և նայ» (էջ 83բ): Շեշտենք, որ ինչպես գրեթե բոլոր ձեռագիր աղբյուրներում, այստեղ ևս քերականը ըստ արտասանության տևողության ու ձևի զատել է ձայնավորների ու բաղաձայնների տեսակներ ու ենթատեսակներ, որը հայերենին հատուկ չէ, այլ կատարվում է միայն հունարենի հետևողությամբ: Այնուհետև՝ «ըստ վանգի Գրիգոր Բ. վանգ է՝ գրի», որը «երկար է դրութեամբ ըստ տրականին, գորը՝ երկար է բնութեամբ ըստ ձգտումն... ըստ բառին մի բառ է, ըստ բաժանմանն սահմանական է, ըստ սահմանին՝ սահման անուն է, ըստ բանին՝ մասն է բանի, ըստ մասանցն՝ անուն է, ըստ անուան՝ մակադրական, ըստ քանակին» (էջ 83բ-84ա): Հեղինակը բառը ըստ բաժանման համարում է սահմանական, ըստ սահմանի՝ սահման անուն, որն էլ մեզ առիթ է տալիս ենթադրելու, որ, հավանաբար, նա, սահման անուն ասելով, նկատի ունի գոյական անունը, քանի որ սահմանականը բայերին բնորոշ քերականական եզր է, մինչդեռ «Գրիգոր» բառը գոյական է, կամ ըստ անվան հեղինակը այն կոչում է մակադրական, մինչդեռ Թրակացին մակադրական է անվանում հատուկ կամ հասարակ անունների վրա դրվողները (անուն), այսինքն՝ ածականը³⁹: Հեղինակը ցանկացել է բառը նաև ըստ քանակի ներկայացնել, սակայն նյութն այլևս շարունակություն չունի:

Երկրորդ նյութի մեջ թվարկվում են վարդապետության եղանակները, որոնք են «սահմանական, բաժանական, ապացուցական, վերլուծական: Հարց. Ջի՞նչ է սահման քերականութեան, քերականութիւն է գիտութիւն տառից և ասութեանց և կիրառութեանց սոցին ըստ շարագրութեան քերթողաց...» (էջ 84ա): Հեղինակը քերականությունը սահմանում է որպես գիտություն՝ տառերի, բառերի և գրողների ստեղծագործություններում

³⁸ Տե՛ս **Յ. Միրզոյան**, Սիմեոն Ջուղայեցի, Եր., 1971, էջ 40, **Գ. Ջահուկյան**, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974, էջ 122:

³⁹ Տե՛ս **Ն. Աղոնց**, նշվ. աշխ., էջ 18:

նրանց կիրառությունների մասին, որոնք բաժանում է «ի կիրառելիս» և «ի կիրառութիւն»։ Քերականը շարունակում է հարցերն ու պատասխանները խոսելով գիտության չորս հասկացությունների մասին. «գիտութիւն ի քանի՞ բաժանի, Դ.՝ հմտութիւն, ներհմտութիւն, արհեստ, մակացութիւն...» (էջ 84ա)։ Խոսելով տառի մասին՝ քերականն այն համարում է «առաջին դուռն գրոց», այնուհետև շարունակում. «Դրուք ի քանի՞ս բաժանին, Է.՝ առաջին տառ, Բ.՝ գիր, Գ.՝ հեգ, Դ.՝ վանգ, Ե.՝ բառ, Զ.՝ բան, Է.՝ զօրութիւն բանի...» (էջ 84աբ)։ Հետո հարց է տրվում, թե քանիսն են տառերը, որի պատասխանն է. «...ըստ թարքմանչացն՝ ԼԶ., ըստ յամբակագունիցն՝ ԼԸ., ըստ նորագունիցն՝ Խ.» (էջ 84բ)։ Եվ շարունակում է խոսել մյուս քերականական կարգերի մասին. «Հարց. Ձի՞նչ է սահման գրոցն. գիր է, որով ձևանա ձայն և այլն... Ձի՞նչ է սահման բառին. բառ է ձայն յօդաւոր նշանակօղ առանց շարամանութեան... Ձի՞նչ է սահման անուն. անուն է մասն բանի հոլովական թարց և այլն» (էջ 85ա)։ Ակնհայտ է, որ սահմանումները լրիվ չեն, այլ ամբողջական քերականությունից կատեխիզիսների հարցերի դուրսբերումն են քաղվածքների տեսքով, և, հավանաբար, ուսումնասիրողների ձեռքի տակ եղել է քերականությունը, որին էլ հղվում է։

Ձեռագրի երրորդ քերականական նյութը ունի «Բառք քերականութեան» խորագիրը, ուր շատ հակիրճ տրվում են քերականական կարգերի բնորոշումները. «Բայ՝ բան կամ մասն բանի, ընդունելութիւն՝ կցորդութիւն, դերանուն՝ փոխ կամ կէս..., մակբայ՝ ի վերայ բանի բանս, շաղկապ՝ միաւոր կամ զուք, քանակ՝ չափ կամ թիւ, սեռք՝ աճումն, ձևք՝ օրինակ կամ կերպ... բաղդատական՝ իսկական կամ համեմատութիւն, գերադրական՝ առաւելադրական...» (էջ 85բ)։ Այնուհետև խոսվում է անուն, բայ, ընդունելություն, դերանուն և հոդ խոսքի մասերի տեսակների մասին. «Եւ գաղափարք անուան են տասն, որոց վեցն են հասարակաց, են այսոքիկ՝ ան, եան, ին, եղ, եր և օր, երեք են հասարակաց և յատկից, որք են ի, ոյ և ու, և մէկն է յատուկ, որ է այ։ Բայի գաղափարն է այս՝ ան, են, իմ, ում..., ընդունելութեան գաղափարք են այսոքիկ՝ օղ, իչ, եալ, լի, լոց, դերանուան գաղափարք են այսոքիկ՝ ես, դու, սա, դա, նա և ածանցական՝ իմ, քո, սովաւ, դօվաւ, նօվաւ, յօղի գաղափարն այս՝ ս, դ, ն, որգոն՝ այս, այդ, այն...» (էջ 86ա)։ Նկատենք, որ այս հատվածում քերականը խոսքի մասերի տեսակները՝ հատկանիշները (վերջավորություններ, ածանցներ, լծորդություններ) չի առանձնացնում ըստ անվանումների, համեմայն դեպս ինքը չի անվանում, և փաստորեն ստացվում է, որ այս վերջավորությունների անվանումները տերմինի արժեք ունեն կամ հենց քերականական տերմիններ են, քանի որ տեսնում ենք, որ այստեղ կա վերացարկման պակաս, իսկ մենք գիտենք, որ յուրաքանչյուր տերմին վերացարկման արդյունք է։

Այս ձեռագրում ևս երեք նյութն էլ հարց ու պատասխանի ձևով հանգամանալից ներկայացված են։

Երրորդը թիվ 2448 ձեռագիրն է, որտեղ (3ա-7բ) «Յաղագս վարժման մանկանց նորագունից դեռևս եկելոց յուսումն տառակրթութեան» աշխատությունն է, որը սկսվում է այն հարցով, թե ինչու երեխաներին պետք է կրթել դեռ մանուկ հասակից, հաջորդում է պատասխանը, ուր ասվում է, որ «պարտ է ուսուցանողին ըստ կարգի և յարմարապէս դաստիարակել»՝ հե-

ռու պահելով «թիւր և անճահապէս» բաներից, հասցնելով աշակերտին «ի կէտ ուսմանն» (էջ 3ա): Նախ և առաջ ուսուցումը պետք է սկսել տառերից: Քերականը առանձնացնում է աստիճաններ: Առաջին աստիճանը տառերն են, «որք արտաբերին միով հնչմամբ» (էջ 3բ), հետո շարունակում է, որ տառերը պետք է բաժանել միմյանցից և ճանուկներին «ճանուցել, որք լինին ձայնաւորս և ի բաղաձայնս» (էջ 4ա), այնուհետև համապատասխանաբար հաջորդում են հարցերը, թե որոնք են ձայնավորները, որոնք՝ բաղաձայնները: Ձայնավորները յոթն են և այդպես են կոչվում, «վասն զի զձայնս յինքեանց ելուզանեն թարց այլոյ գրոյ» (էջ 4ա), իսկ բաղաձայնները երեսունն են, որոնք նաև շարաձայն են կոչվում, «զի ընդ ձայնաւորի շարելով ապայ կարեն ձայնս արձակել... իսկ... առանց միաւորութեան... անկարելի է ձայնս արձակել» (էջ 4բ): Այնուհետև հաջորդում է վանկի վերաբերյալ հարցը: Միջնադարյան մյուս քերականների նման նաև գտնում է, որ «վանկ է առաջին շարակալումն գրոյ» (էջ 4բ), քանի որ գրից հետո պետք է «զվանկն ուսանիլ», որն էլ բառի մասն է: Նա վանկը կոչում է նաև փաղառութիւն: Քերականը կրկին շարունակում է աստիճանների առանձնացումը և ներկայացնում հաջորդ երեք աստիճանները, որտեղ վանկերն են. «երկրորդ աստիճան վանկից, որք լինին միով ձայնաւորաւ և միով շեշտիւ կամ միով բաղաձայնիւ» (էջ 5ա), «երրորդ... միով ձայնաւորաւ երկուքումք բաղաձայնիւք» (էջ 6ա), «չորրորդ... երկբարբառօքն և միով բաղաձայնիւ» (էջ 6բ): Ձեռագիրը հարուստ է օրինակներով:

Այսպիսով, հանգում ենք այն եզրակացության, որ հարց ու պատասխանի տեսքով ներկայացված նյութերը սխեմայի առումով հիմնականում կանոնիկ են՝ տրվում է հարցը, որին հաջորդում է պատասխանը, որն էլ շարադրանքը դարձնում է պարզ և հասկանալի: Կատեխիզիսների տեսքով ներկայացված քերականական աշխատությունները գործնական քերականության տեսակ կարելի է համարել, քանի որ սովորաբար քերականությունները ներկայացվում են սահմանումների տեսքով, և ի տարբերություն դրանց՝ կատեխիզիսների միջոցով ներկայացված քերականությունները ավելի դյուրին են, և պատահական չէ, որ կատեխիզիսների միջոցով են ներկայացվում ուսումնական ձեռնարկները, աշակերտներին (և ոչ միայն նրանց) ավելի մատչելի, ընկալելի լինելու համար: Ի տարբերություն սահմանման միջոցով ներկայացված քերականությունների՝ հարց ու պատասխանի ձևով ներկայացնելիս ուսուցումը ավելի ազատ է և կենդանի:

ТАТЕВИК МАНУКЯН – Катехизисная грамматика в армянских рукописях XIV–XVII вв. – Катехизис – краткое сочинение в форме вопросов и ответов, объясняющее основные принципы христианского вероучения, а также какой-либо науки. Слово происходит от греческого существительного ή κατήχησις (публикация, устное обучение, совет). Катехизисами считаются книги с названиями «Книга вопросов», «Вопросник» и т. д., которые также известны нам из армянских рукописей. Жанровая форма катехизисов использовалась в различных трудах.

В армянских рукописях форму катехизисов имеют учебные пособия, в которых ученик задает вопросы, а преподаватель отвечает на них. Метод облегчает

процесс обучения в силу своей визуальности и существенности. Именно поэтому во многих армянских рукописях грамматика подана в форме катехизиса.

Предметом исследования в статье являются рукописи ММ 2366 (XIV–XV вв.), 2307 (XVII в.) и 2448 (1687–1689 гг.). Катехизисы можно считать отдельным видом практической грамматики.

TATEVIK MANUKYAN – *Catechismal Grammars in the Armenian Manuscripts of XIV-XVII Centuries.* – Catechism is a short essay of the Christian faith in the form of a question and answer, and also an essay of the basic principles of the science field. The word comes from the Greek noun η κατήχησις (publication, oral training, advice). The books entitled "Book of Questions", "The questionnaire", etc., which we know from the Armenian manuscripts are considered catechism. Genre form of the catechisms was used in various writings.

In the Armenian manuscripts by catechisms are presented the tutorials in which the process of question and answer occurs between the teacher and pupil in the active form. This method facilitates learning process through visibility and materiality. That is why in many manuscripts the grammar is presented in the form of catechisms.

The subjects of study in this article are the ММ 2366 (XIV-XV century), 2307 (XVII) and 2448 (1687-1689) manuscripts, in which the grammar is presented in the form of catechisms. Catechism can be considered as a separate type of applied grammar, since grammar is usually represented by definitions.